## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հոկտեմբերի 1-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գալուստ վրդ. Դարբինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հոկտեմբերի 8-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադևոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Այս երիցս անգամ գամ առ ձեզ, զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան» (Բ Կորնթ. ԺԳ 1) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հոկտեմբերի 15-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հոկտեմբերի 22-ին, կիրակի.- Զ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Նոյեմբերի 25-ին, երեքշաբթի.- Պահք:*

Այսօր, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որին Տ. Արշեն աբեղա Սանոսյանը միաբանների ուշադրությանը հանձնեց Վեհափառ Հայրապետի՝ Եգիպտոս և Եթովպիա կատարած այցելությունների մանրամասներ:

Ապա Վեհափառ Հայրապետը այցելության ժամանակ կուտակված իր տպավորություններով կիսվեց միաբանների հետ:

*Նոյեմբերի 29-ին, կիրակի.- Է. կիր. զկնի Ս. Խաչի: Գիւտ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց: